Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՑ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 -31.12.2025թթ |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025-30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.10.2025թ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 95 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 2 դեպքի վարում (ԱՖԳ գնահատում, փաստաթղթերի կարգավորում ցերեկային կենտոնի ուղեգրման կազմակերպում), 1 շահառուի համար ամենամսյա ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի ստացում ՄՍԾ-ից, 21 ուղղորդում թաղապետարան աղբահանության արտոնություններից օգտվելու նպատակով:
Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում գործել են տարբեր հետաքրքրությունների խմբակներ, կազմակերպվել միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 9 խմբակ, որոնց մասնակցել են 95 շահառու:
    - Գրական խմբակ
    - Երգի խմբակ,
    - Կինեզիոլոգիայի խմբակ,
    - Հմուտ ձեռքեր,
    - Առողջ ապրելակերպ,
    - Աշուղական խմբակ,
    - Ազգային երգ ու պար
    - Թատերական խմբակ
    - «Նկարչական» խմբակ

Կազմակերպվել է թվով 29 մշակութային միջոցառում, որոնցից 12 կենտրոններում 17 կենտրոններից դուրս, որոնց մասնակցել է 75 շահառու:
Իրականացված միջոցառումներն են՝

1. ՀՀ Սահմանադրության օրվա հիշատակում, նշվեց տոնի խորհուրդը, կարևորությունը, կազմակերպվեց փոքրիկ խաղ

2. Քրիստոսի պայծառակերպության տոնին նվիրված թատերականացված միջոցառում «Տիգրան Մեծ» այգում՝ «Վարդավառ, Սեր և հիշողություն» խորագրով, ներկա էր նաև Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Մարատ Սևոյանը
3. Ծննդյան տոների նշումը, առանձնահատուկ շուքով նշեցինք 97 ամյա Սիլվա տատիկի տարեդարձը
4. Սբ. Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնի նշում
5. Հանդիպում ԱՄՆ-ից ժամանած կամավորի հետ, ով ավագ սերնդի հետ իրականացրեց անգլերենի պարապմունքներ, մասնակցեց ընթացքում կազմակերպված միջոցառումներին:
6. Նոնենի և Նոր Նորք համայնքային կենտրոններում 2 եռօրյա ճամբարի կազմակերում՝ Արցախցի եւ տեղացի տարեցների համար:
7. Հայաստանի անկախության օրվա հիշատակում, քննարկում անկախության կարեւորության եւ հայրենիքի մասին զրույցներ
8. «Ժողովրդական երգ ու պարը Նոնենիում» խորագրով միջոցառում
9. «Շախմատի, նարդու և շաշկու» մրցաշարերի կազմակերպում՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների և կենտրոնի շահառուների մասնակցությամբ
10. Ավան համայնքային կենտրոնի տարեցների թիմը մասնակցել է 2025 թվականի շաշկու հանրապետական մրցաշարին, և 5 մասնակիցներից 4-ը գրավել են պատվավոր հորիզոնականներ:
11. Էքսկուրսիաների կազմակերպում

    Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Ավան, Նոր Նորք վարչական շրջանների աջակցությամբ.

    - Գեղարդի վանական համալիր
    - Նորավանքի վանական համալիր, Պարույր Սևակի տուն-թանգարան, Արենիի Գինու գործարան
    - Էջմիածնի մայր տաճարը
    - Ստեփանավանի Դենդրոպարկ

    Այլ էքսկուրսիաներ

    - Վանաձոր՝ Սուրբ Գրիգոր Նարեկացի, Թեժ լեռ ռեստորան, Սուրբ Մարիամ Աստվածածին ՝
    - Վայոց ձորի տեսարժան վայրեր
    - Պարույր Սևակի տուն-թանգարան, Ջերմուկ առողջարանային քաղաք՝ Ջերմուկի ըմպելասրահ, Ջերմուկի ջրվեժ (Ջրահարսի վարսեր), Երազանքների կամար,Նորավանք:
    - Սևանա լճի ափին ժամանց
    - Դիլիջանի տեսարժան վայրեր
    - Բջնու «Սուրբ Սարգիս» և «Սուրբ Աստվածածին» եկեղեցներ, «Գետափ» հանգստի գոտի
    - Ապարան ( Տառերի պուրակ, Բաշ Ապարան հուշահամալիր, Ապարանի Սուրբ խաչ եկեղեցի, Մուղնու Սուրբ Գեվորգ եկեղեցի
12. Մասնակցություն համերգներին

    Նոր Նորքի թաղապետարանի բակում՝ Նոր Նորք համայնքի ծննդյան օրվան նվիրված համերգին՝

    Արամ Խաչատրյան» համերգասրահում.

    - Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի,
    - ՀԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ,
    - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Սիմֆոնիկ ճամփորդություն»,
    - «ԱՐՍ Նովա Նապոլի» նիապոլիտական երգերի,
    - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Արմենիա» 9-րդ միջազգային երաժշտական փառատոնի բացում,

    Կամերայի երաժշտության տուն.

    - «Սերենադ» կամերային նվագախումբ,
    - «Հովեր» պետական կամերային երգչախմբի եւ ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համատեղ համերգ,

- o Երեւանի պետական կամերային  երգչախումբ «Հայրիկ Մուրադյան» 120 ամյակին նվիրված,
- o «Երգող Արցախ» երգչախմբային համերգներին

Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում

- «Նարեկ» պարային համույթի համերգին

- **Աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** հոգեբանի կողմից կազմակերպվել է թվով 40 խմբային հանդիպում (մասնակիցների թիվ՝ 71) և 4 շահառուի հետ անհատական շարունական աշխատանք՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել են նաեւ անցած կենսափորձի վերարժեւորմանն ուղղված, արժեքային համակարգի քննարկմանը եւ խմբային արժեքների դուրսբերմանն ուղղված, խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաեւ իրականացվել է երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ եւ պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երեւակայության հետազոտմանը եւ զարգացմանն  ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:
- **Սննդի կազմակերպման շրջանակներում** կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայությունների տրամադրման շրջանակներում**
  - o 1 շահառու օգտվել է լվացքի ծառայությունից:
  - o Բուժքրոջ կողմից ցերեկային կենտրոնում իրականացվել է թվով 84 շահառուի զարկերակային  ճնշման չափում, 89 օքսիմետրիա, 1 շահառուի համար իրականացվել է այց հիվանդանոց, 7 շահառուի գլյուկոմետրիա, 0 շահառուի ներերկում: Հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում՝ «Շաքարային դիաբետ», «Կատարախտա» «ԱՆ-ի պետպատվերի շրջանակներում իրենց իրավուքները», «Պարկինսոն» ,«Մաշկի խնամք» «Գրիպ և պատվաստում» թեմաներով քննարկումներ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը

- ➢ Վարսավիրական ծառայություններ  (տե՛ս հետեւյալ հղմամբ https://surl.lt/ffrfcl  ՝)
- ➢ Վարդեվառին նվիրված միջոցառում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.lu/dlwecq )
- ➢ էքսկուրսիա դեպի Բջնի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/gojwar )
- ➢ Շաշկու մրցաշար (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/wtqkcj  )
- ➢ էքսկուրսիան դեպի Էջմիածին (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.lt/fwzdmn  )
- ➢ «Շախմատի, նարդու և շաշկիի» մրցաշարեր (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/lqrenl ):
- ➢ էքսկուրսիա դեպի Վանաձոր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/wufehv ):
- ➢ Բակային եռօրյա ճամբար (տե՛ս հետեւյալ հղումներով՝ (https://surl.lu/xzfwqd , https://surl.li/newmsg , https://surl.li/ebsgct);

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Երևանի բոլոր վարչական տարածքներում ՄՍԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին:
- ✓ Նոր Նորք եւ Ավան համայնքները սպասարկող թիմերի Սուպերվիզորը մասնակցել է
  - առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) դասընթացին
    - Թեմա «Հաշմանդամություն և գործիքակազմ», Հուլիսի 15-16 2025թ: Դասախոս՝ Ջերոմ Բիքենբախ:
- ✓ Նոր Նորք համայքային կենտրոնի աշխատակիցները մասնակցել են «Սթրեսակայունություն» թեմայով դասնթացի վարող Ալբերտ Հովհաննիսյան
- ✓ Սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾ Կենտրոն տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված համագործակցության ֆորումին:
- ✓ «Նռնենի» և Նոր Նորք համայնքային կենտրոնների թիմ լիդերները մասնակցել են Մատենադարանում Հանրային խորհրդի սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված հոգեկան առողջության հարցերով ընդլայնված քննարկմանը՝ ՀՀ առողջապահության և ԱՍՀՆ նախարարության աշխատակիցների և ԱՄՆ-ից ժամանած փոշձագետների մասնակցությամբ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 83/95 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 84 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 88 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 64 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 71 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 95 |
| 5. 1 | Նշել խմբակի անվանումը՝ Կինեզալոգիա | 62 |
| 5. 2 | Նշել խմբակի անվանումը՝ Գրական | 59 |
| 5. 3 | Նշել խմբակի անվանումը՝ Երգի | 38 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ Հմուտ ձեռքեր | 49 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ Առողջ ապրելակերպ | 40 |
| 5.6 | Նշել խմբակի անվանումը՝ Աշուղական երգի | 18 |
| 5.7 | Նշել խմբակի անվանումը՝ Ազգային երգ ու պար | 34 |
| 5.8 | Նշել խմբակի անվանումը՝ Թատերական | 16 |
| 5.9 | Նշել խմբակի անվանումը՝ «Նկարչական խմբակ» | 21 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 75 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 75 |
| 7. | Այլ ծառայություն Բաղնիքից շարունակաբար օգտվել են<br>Լվացքի կազմակերպում)<br>Բուժքույրական ծառայություններ | 2<br>1<br>89 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «07»10.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)